

ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Պոչկարիոյ համար  
 Տարեկան 12 Թր.  
 Վեցամսեայ 6 "

Արտասահմանի հա-  
 մար Տարեկան 15 "

Վեցամսեայ "

Ամերիկայի համար  
 Տարեկան 5.01 Թր.  
 Վեցամսեայ 5.01 "

Պատկերակապի անարժեք  
 գրեթե համար 40 սակերով  
 հ. իսկ վերջին երեսի հա-  
 մար 20 սակերով հ. երեքին  
 սակի սկզբունքում համար  
 20 Օլո գեղջ կըլլայ :

Վառնայի համար ձեռքի 10 սակերով

# ՇԱՌԹՈՒՄ

P. Kalmegarian  
 Medico-Mathematiker  
 Vienne W. 4

Նախկին և նորագույն  
 հանրագրքերու հասցիին  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)

Կրթութեան և յանձնարար  
 Արտասահմանի ձեռքի  
 ( 20 ՍԱՆԹԻՄ )  
 Պոչկարիոյ համար ձեռքի  
 ( 15 ՍԱՆԹԻՄ )

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹԻ ԶՈՐԵՔԵԱՔՁԻ ԵՒ ԵԱԱԱԹ ՕՐԵՐԸ

## ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Այս անգամայ «Իրօչակ» ա-  
 նաջարկում է հիմնել «Հայ կար-  
 միր խաչի ընկերութիւն» մեր  
 յեղափոխական բանտարկեալնե-  
 րին, սքսորեալներին և իրենց  
 աշխատանքով ապրելու անըն-  
 դունակ դարձածներին օգնե-  
 լու համար :

Իսկապէս Հայ յեղափոխական-  
 ների մի մեծ թիւ այսօր զբա-  
 ճուած է բանտերում և քսորա-  
 վայրերում, շատերն էլ ոչնչա-  
 ցել են դառն չքաւորութեան  
 մէջ, իսկ մեր հասարակութիւնը  
 միշտ անտարբեր է գտնվել դէպի  
 հայրենիքի այդ զինուորները, ո-  
 րոնք իրենց կեանքը և ապագան  
 վտանգի են ենթարկել հայրե-  
 նիքի փրկութեան գործի համար,  
 առանց ունէ դրական յոյս ունե-  
 նալու իրենց անհատական ա-  
 պագայի մասին :

տակով գրամական խմբեր հիմ-  
 նել էլ մեր կարծիքով աննպա-  
 տակալարմար կը լինի : Եւրոպայի  
 էլ գուցէ աննպատակալարմար  
 լինի «կարմիր խաչի ընկերու-  
 թիւնը» բոլորովին հպատակե-  
 ցնել կազմակերպութեան :

Պէտք է միջին ճանապարհը  
 գտնել որպէսզի որքան կարելի է  
 շատ հայեր մասնակցեն այդ  
 գործին :

Չը պէտք է մոռնալ որ շատ  
 հայեր կարող են լինել որոնք  
 բուն յեղափոխական գործի հա-  
 մար գրամ չեն տալ, բայց բան-  
 տարկեալներին և քսորվածներին  
 համար կըտան. ու կարմիր խաչի  
 ընկերութիւնը այն տեսակ մի ձեւ  
 պէտք է ունենայ որ այդ տեսակ  
 հայերին գրաւել կարողանայ :  
 Այդ նպատակի համար կարելի  
 է ընդունել ամենաոչինչ գումար-  
 ներ անգամ, որպէսզի ընկերու-  
 թիւնը տարածվի Հայ մոլորդի  
 բոլոր խաւերի մէջ :

մէն ինչ իրեն նեղ կերելայ և ան  
 թեւեր առնելով ամպերու մէջ կը  
 թռչի ու վայր մը կը փնտռէ հան-  
 ցասանալու համար :

Գերմ. Թարգմ. Ա. Մարգարեանի

**ԺԸՆԷՎԻ ԴՈՒՍ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**

«Ժընէվու» թերթի մէջ ռուս  
 ուսանողներու գրած նամակէն  
 հետեւեալը կը քաղենք :

« . . . . . Արդարադատ եղէք,  
 առանց մեզ լսելու զմեզ մի դա-  
 տէք. չը գիտէք թէ ի՞նչ յաջոր-  
 դական սարսփելի տպաւորու-  
 թեանց տակ կապրինք այս վեր-  
 ջին ժամանակներս, Գուք չը գի-  
 տէք թէ ինչեր տեղի կուենան  
 մեր երկրին, Ռուսիոյ մէջ, հե-  
 ազիրը հսկողութեան տակ է,  
 իսկ մասնաւոր նամակները կը  
 գրաւուին :

Բայց մենք երբեմն մեր ծնող-  
 ներէն, որիչ ճամբաներով լու-  
 րեք կառնենք. որչափ ալ որ լու-  
 րերը հազուադէպ են, բայց եւ  
 այնպէս ամենաչոր հոգիներու  
 մէջ զլւանք կը յարուցանեն և  
 ամէնէն անզգայ մարդոց ջի-  
 զերու վրայ կազդեն, կոտո-  
 րածներու մանրամասնութիւն-  
 ները իրարու ետեւէ մեզի կը  
 հասնին և մեր ջիղերը խտտապէս  
 կը թուլցնեն : Եւստ երկար պիտի  
 ըլլայ այս նամակները ձեզի թարգ-  
 մանելը. ու անոնք ի՞նչ պիտի  
 ըսէին ձեզի, Այդ նամակները  
 կը խօսին այնպիսի մարդոց մա-  
 սին որոնք ձեզի համար օտար  
 են, բայց մեր քոյրերը և եղ-  
 քայները են որոնց կը զարնեն կը  
 նահատակեն : Բայց ձեզի գաղա-  
 փար մը տալու համար թէ՛ մեր  
 մտքերը ինչ տպաւորութիւններու  
 ծանրութեան տակ կը կազմա-  
 կերպուին, պիտի թուենք քանի  
 մը օրինակներ :

Թարգմովէն :

« . . . «Նակայքայի» հարուած-  
 ները անգթօրէն կը տեղային, կը  
 զարնէին անխտիր կերպով. ու-  
 սանողի մը գլխու կաշին մաշեց-  
 վը միտին «նակայքայով» քեր-  
 յեցին, հիւանդանոց տարուած  
 միջոցին անասանելի ցաւէն կա-  
 ղաղակէր :

Բիէվէն :

«Երէկ մարտ 2ին Բիրատովը  
 հրացանի բռնեցին. 206 ուսա-  
 նողներ զօրաբանակներու մէջ  
 տեղաւորուելու պատժին ենթար-  
 կուեցան . . .

Ս. Բէթէրպուրկէն :

«Մայր եկեղեցիին մէջ ոստի-  
 կանները մահու հարուածներ  
 կուտային ուսանողներին, որոնք  
 կը կարծէին թէ քահա-  
 նաներու կողմէն պիտի պաշտ-  
 պանուին, մինչդեռ քահանաները՝  
 խաչերը ձեռքերնուն, փոխանակ  
 կոտորածը դադարեցնելու կը  
 պահուէին, ոստիկանները դե-  
 առախ աղջիկներուն մազերէն  
 բռնելով գլուխները պատերուն  
 կը զարնէին, Թէխնիքովի բարձ-  
 րագոյն դպրոցէն ուսանող մը  
 իրեն շրջապատող խաղախներէն  
 ճողպրիլ կուզէր բայց, երբ տե-  
 սաւ որ իր եղբայրը գլխուն ի-  
 ջած հարուածէն զետին փռուեր  
 է ու ձեզքուած տեղէն արիւնը  
 և ուղեղը դուրս կը ժայթքէին,  
 իսկոյն խենթեցաւ : Սարսփելի  
 էր տեսնելը թէ ինչպէս խենթե-  
 ցած եղբայրը կուտաներով իր  
 թեւերուն միտքը կը կտրէր և  
 կը նետէր խաղախներուն առ-  
 ջեւ . . .

Այսչափ թուելը կը բաւէ, հիմա  
 դուք կրնաք ըմբռնել մեր զգաց-  
 մունքները . . .

## ԵՐԿՈՒԻ ԽՕՄԲ «ՆԻԼԼԵՐ»ԻՆ

Նուարթ և կայտառ բնութիւն  
 Նուր ընկերոջու Գեորգիին

**I**

Չուարթ և կայտառ բնութիւն  
 մը ազդելուն է ամէն բարութեանց  
 և ազնիւ զգացումներու : Կատար-  
 ուած մեծամեծ գործեր, գեղե-  
 ցիկ ձևերակներ բոլորեցան այսօ-  
 շինակ տրամագրութեանէ մը : Նեղ  
 և մաշկ հոգիներ, որոնք միայն  
 անցեալին վրայ ողբ կը կարգան  
 և տպագայէն կը վախնան ընդու-  
 նակ չեն կեանքի սրբազնագոյն  
 րոպէները պէտք եղածին պէս  
 ըմբռնել, զանոնք վայելել և ըստ  
 այնմ գործել : Անոնց համար  
 անցեալ յիշատակներ անհամ են  
 և ապագան անմխիթար է :

**II**

Կենաց մէջ մեծ րոպէ մըն է  
 այն վայրկեանը, երբ հասուն  
 պատանին իր ապագան կորոչէ,  
 երբ ան իր անձնական կենաց-  
 ուղին կընարէ, երբ հզօր որո-  
 շում մը երիտասարդ հոգին կը  
 լեցնէ անհուն եռանդով, երբ ա-

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳիՕՍՏԵՆՃԷ, 4 Ապրիլ

Թուականէս շորս օր առաջ  
 Տէրճան գաւառի Չանախի գիւ-  
 ղէն նամակ մը ստացանք որուն  
 մէջ կը նկարագրուի ժողովրդին  
 սարսփելի թշուառութիւնները  
 որ կը պատճառէ ինքը թուրք  
 կառավարութիւնը և քանի մը  
 արիւնուշտ քիւրտ աղաներ :  
 Օր նոր պատուհանոր, ժողո-  
 վուրդը երկիրը կը թողու, հայ-  
 րենիքը կը դատարկուի :

Նոյն նամակի մէջ կը նկարա-  
 գրուի և հետեւեալ սարսփելի  
 վայրագութիւնը : Վերոյիշեալ  
 գիւղին մէջ ժիւղբերախ զաւակ  
 անբուժելի հիւանդ կըլլայ, ո-  
 րուն հայրը ստիպուած կըլլայ

բժշկի գիմել, (գաւառներուն մէջ բժիշկ կը կոչուին ընդ հանրապետ անոնք, որոնք կարող են երբեմն վերքեր բուժել) Բժիշկը կուգայ և հայերէն վարձարար վրէժ լուծելու համար կը յայտարարէ թէ՛ հիւանդը ուրիշ բանով չէ կարելի առողջացնել, եթէ ոչ նոյն գիւղի մէջ նոր մեռած 12 տարեկան հայ տղայի մը աչքերովը. պէտք է անոր աչքերը բերէք որ դեղ չի նեմ ե առողջացնեմ. Իսկոյն քիւրտերը բահ ու բրիչ առնելով կը յարձակին հայերու գերեզմանատան վրայ և տղայի նոր թաղուած գիակը դուրս կը հանեն ու մարմինը ամբողջովին յոչոտելէ վերջ, աչքերը բժիշկին կը բերեն զի շինելու համար նամակագիրը կը յաւելու նաեւ որ քիւրտի տղան երկու օր վերջը կը մեռնի:

ՂԱԶԱՐՈՍ ՊԱՂԱՒՈՒՆԻ

**ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ**

ԻՐԵՆԲ ԿԸ ՀԱՍՏԱՏԵՆ ՀԻՄԱ

Ա.

Մեր խոստմունքին համաձայն կանդրադառնանք Արփիարի եւ իր լըն կարկուռներուն, քայքայուած ու ապականուած ըլլալը ապացուցանող Անահիթի մերկացուցումը: Թող չի կարծուի որ Զօպանեանի պէս մէկը մեզի համար կարեւորութիւն սկսած է ունենալ, կամ անոր ըսածները, նոյնիսկ աւելին ծանօթ չեն մեզի եւ ժողովրդին կարեւոր մէկ մասին. մենք Զօպանեանի գրածները կամփոփենք Շարժումի մէջ, անոր համար միայն, որ ան իր հակայեղափոխա-

կան գողափարնէլուն, այսօրուան իր գիմակաթափ ըրած՝ ճիւղը բուռն կերպով պաշտպանած ըլլալուն համար, դեռ երեկ Նոր Կեանքի եւ անոր «գլուխն փշոյլ» անկղզուք փախա-թերթիկներով երկինք բարձրացնելու աստիճան փառարանուեցաւ: Ու բնական է, մեզի համար է՛ն զօրաւոր փաստը կրնայ ըլլալ սոյն մարդուն խօսքերը՝ որ իրենցմէ էր, որ, զեռ երեկ, զիրենք կը գովէր ու իրենցմէ կը գովուէր:

Աս իրենց քերտով ըսուած մերկացուցումը արտասուլումովը վերջապէսը պիտի գնենք Կեդրոն-Արփիարի եւ իր հակայեղափոխական կուսակցութեան դէմ մեր մղած կռիւններուն:

Պ. Զօպանեանի մերկացուցումըն դուրս պոռթկալու գլխաւոր շարժառիթը եղած է—իւր ըսածին նայելով— յօգուածի մը առթիւ իր «ես»ին վերաւորումը Կեդրոն-Արփիարի կողմէ: Զօպանեանի գրածները եթէ մեծ մասամբ աննպատակ են Արփիարին, կան հոն նպատակաւոր կէտեր ալ, զորո Արփիար ատուց այլ եւ այլի պարսկու ճակատին դնելու է: Վստահ ենք թէ աս նպատակաւոր կէտերն ալ գոյութիւն չի պիտի ունենային հոն, եթէ ասիէ առաջ իր գրածները չի հակասելու հարկադրուած չըլլար:

Ինչ որ մեր ուշադրութեանն է ի կրնար վերաբիլ, ան է որ, Պ. Զօպանեան ինչպէս միշտ՝ նոյնպէս եւ իր աս գրուածքին մէջ, մեզի կը ներկայանայ իր սովորական ետախտաւորութեամբը. ամէն տողէ, ամէն պարբերութեանն ինքնագովութիւն, ոչքլամ կը հոտի:

Դառնանք Արփիարի մասին իր գրածներուն:

Զօպանեան տասը տարուան «գրական բարեկամութեան» մը միջոցին՝ ճանչցեր է զանի:

«Հեզնող մը, շատ ուշիմ բայց շատ խախտումի ու հապճեպ զարգացում ունեցող մարդ մը շահեկան ու վառվառն, բայց էականապէս քերք ու ՉՍՐ խառնուածք մը»: Ու քանի մը տող վարը կաւելցնէ Զօպանեան. «Յաճախ ԱնՁԱԿԱՆ ասելութիւնէ մղուելու ձգտում (ուրի Արփիար): Հաստատութեան մը, գործի մը վրայ անկողմնակալ ու բարձրահայեաց քըննադատութիւն մը ընելու տեղ, Արփիարեան շատ անգամ «անձ մը կճելու» փափաքը ցոյց կուտայ»:

Զօպանեան Արփիարի հետ ունեցած «գրական կապերը» կը վերջացնէ յօրինելով առասպելական պաշտպանողական մը՝ անոր ճակատին դրոշմուած խարտը մաքրելու համար, որ ենթադրութիւններ, կարծիքներ ըլլալէ առաջ իր թքածը չի լղելու բունազօրութիւնը ճիգ մըն է:

Ասոնք մտքերնիս պահենք եւ հետեւինք Զօպանեանի գրածներուն:

Բ.

Զօպանեան Արփիարի հետ ունեցած «գրական կապերը» պատմելէ վերջ՝ կանցնի իր «ազգային գոյծութեան»! Կապերուն, ձեռքէ չի ձգելով ինքնագովութիւնը:

Մինչեւ 1895ի սարսուղացիլ պատահարները, Զօպանեանի պէս «զգայուն հայրենասէր» մը անտարբեր է եղեր զէպի ազգային գործերը եւ «ազգին հետ կապուած» իր իսկ խոստովանութեամբ—միայն այն սիրովը զոր կը տածէ եղեր անոր լեզուին համար... Ճարինքէ ի վեր իր ազգին կրած հարստահարութիւնները, տառապանքները, մազի չափ իսկ կարեւորութիւն չեն ունեցեր, եւ ազգասիրութիւնը իրեն համար արդէն յիմարութիւն երազել էր: Եւ սակայն ջարդերը յանկարծ ցնցեր են զանի, ճանչցեր է իր յանցանքը, եւ ուղեր է իր ազգին օգտակար ըլլալ

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ԱՐԴԻԵՒ ԳԱԼԻՔ ՕՐԵՐԻՑ (\*)**

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՂՈՐԴԱՅԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ)

Ի

Իմ շատ սիրելի «Կարին» բեզ եւ Լիւրուս առաջին ֆաղափակն յոյժած դաստիարակուած, որովհետեւ ոչ ոք այնքան չի ազդել իմ ֆաղափակն զգացողութեան վրա, որքան դու:

Ընկերներ, Դիտութիւնից առած դասանանքներ չեն եւ ոչ էլ իրականութիւնից քաղած դասեր որ պիտի ներկայացնեմ ձեզ: Խորհրդածութիւններ են լոկ մասնագէտ ուսանողի, որը շատ քիչ է սովորել քաղաքական դասանանքներ ձեռք բերելու համար եւ շատ քիչ է ապրել ու սեսել փորձուած ու աշխուրջ գործիչի անյող-

(\*) Դասախօսութիւն կարգաւորած Եւրոպայի Հայ Ուսանողական միութեան IV համագումարում:

դողդ հաւատը եւ վերջնապէս որոշուած նպատակը ունենալու համար: Խորհրդածութիւններ են հայ ժողովուրդի արդի եւ զարթօն օրերի մասին, քիչ էլ քաղաքական ծրագրեր են... երազանքներ, Երազանքներ, որովհետեւ դժբախտութեան մէջ մարդիկ սիրում են երսօղել գալիք երջանիկ օրերի մասին եւ աշխատում են գորշ իրականութեան մէջ գտնել լուսաւոր ապագայի յուսատու սաղմը: Եւ կը ցանկայի: որ մեր ամբողջ ժողովուրդը սովորէր երազել ապագայի ազատ ու հպարտ օրերի մասին, որովհետեւ երբ մի ամբողջ ժողովուրդ յարատեւութեամբ գգուում է ու եւ է երազանք այս վերջինս կարող է իրականանալ:

Թող եւմ տալիս ինձ հէնց այժմ, դասախօսութեան սկզբում, սեղմ կերպով բանաձեւելու երկու էական նշանակութիւն ունեցող հայեցակէտներ, որոնք այս դասախօսութեան անկիւնաքարերն են կազմում եւ տիրապետում են մեր խորհրդածութիւններին: Մեր տողին հիմնական հայեցակէտը այն է, որ հայ ժողովուրդի պէս կարող եւ իմացականութեամբ բարձր մի ժողովուրդ ազգային անկախութեան եւ քաղաքական ազատութեան մէջ միայն կարող է հասնել բարձր զարգացումի եւ արտադրել ինքնատիպ եւ մեծ իր ոյժերի եւ ընդունակութիւններ:

Իր շրջանակի մէջ, Մեր երկրորդ հիմնական հայեցաքը կայանում է նրանում, որ հայ իրականութիւնն ու կեանքը պէտք է քննիլ ոչ թէ այս կամ այն դասակարգի անմիջական շահերի սուսառչէտից, այլ ինկատի առնելով ամբողջութեան, գոնէ մեծամասնութեան քուլտուր-տնտեսական շահերը եւ այս կամ այն դասակարգի շարժումին կարելի է եւ պէտք է յարիլ այն գէպքում միայն, երբ այդ շարժումը խոստանում է քուլտուրական նոր տարրեր մըտցնել ամբողջի կեանքի մէջ:

Հայութեան երկու կէտերի տարբեր կացութիւնը թելադրում է մեզ զատ զատ ներկայացնելու կովկասահայ եւ թրքահայ խնդիրները, բայց այս քառանկուսից չեզոքակցութեք բնաւ, թէ եւ իրքահայ շարժումը հիմնովին զատում եւ կովկասահայ շարժումից. ընդհակառակը, եւ այն կարծիքին են որ վերջի վերջոյ գոյութիւնն ունի մի հայկական խնդիր եւ մի հայկական շարժում՝ համահայկական խնդիրը եւ շարժումը, որ մեր ժողովուրդի երկու կէտերի միացումը պիտի լինի թէ կովկասահայերի եւ թէ թրքահայերի վերջնական նպատակը եւ որ այդ միացումը Հայ ժողովրդի քուլտուրական զարգացման ամենաէական պայմաններէ մէկն է:

Դասախօսութեան ընթացքում պի-

Բարիզի... մէջ, Ինչպէս կը տեսնուինք, Պ. Զօպանեան Ֆրանսերէն լեռնի զուտ սորվելու համար Բարիզ մեկնացանք: Բարիզ! մը ըրածի պէս:

Պ. Զօպանեան իր «գրական բարեկամութեան» ժամանակէն ճանչցած ըլլալով Արփիարը, թէ ի՞նչ ՉՍՐ խառնուածք մը ունի, ի՞նչ զգուշի տիպ է եւ ի՞նչ նկարագիր ունի եւ մահաբեր սո՞քան անկարող եւ անընդունակ յեղափոխական—իւր թէ— գործի մէջ մտնալու, ասոնք գիտնալով հանդերձ կըսեմ, ՀՐ.ՊԱՐԱՎԱՐԱՆ մը անգամ չէ ըսած, չէ զգուշացած ժողովուրդը անոր ծողակ ինչպէս—ինչպէս ըրին շատ մը ազնիւ անհասներ: Մինչդեռ իբր անկողմնազգասէր! սովորութիւնը ունի տարօրինակ փութկոտութեամբ մը, իր բազուճէն վեր ելնել, պատգամներ որոտալ, իր կնճիթը խթել յեզափոխական ամէն կնճոտ, թայդ խնդիրներու մէջ, որոնց մասին ինքը կատարելապէս ազէտ է. երբ—իւր ըսածին նայելով—1895ի ջարդերէն վերջ հազիւ հազ ցնցուած ու իր ազգին ցաւերովը հետ քրքրուել սկսած է, Ինչպէս ըսի, Պ. Զօպանեան, իր ատ նուիրական պարտականութիւնը չէ կատարած, հրապարակաւ չէ յայտնած իր գիտցածները Արփիարի մասին. ու իր «գրական բարեկամին» խաթը ազգին շահէն զերազատած է, որուն համար ամենէն ծանր եւ միայն պատժանք դատապարտելի պատասխանատուութեան մը տակ գտնուած է դեռ այն ատենէն:

Յետոյ Զօպանեան իր «գրական բարեկամ» Արփիարը ընթերցողներուն այսպէս կը ներկայացնէ.

«... Արփիար Արփիարեանի թեթեւութիւնները կը ըզխին գլխաւորապէս իր այն կարեւոր սխալէն՝ որով չէ ուղած սահմանափակուիլ իր այն գերին մէջ՝ որուն իր ձիրքերը գինքը կը կոչեն, եւ յամառած է յաճախ կատարել այնպէս գործեր որոնց անստ-

տի գլխաւորապէս ծանրանամ կովկասեան հայութեան վրա, թրքահայերի մասին կը խօսեմ համառօտ կերպով հէնց այժմ դասախօսութեան սկզբում:

Ինչպի մէջ է կայանում տաճկահայոց խնդիրը:

Տաճկահայոց խնդիրը ինչպէս եւ ամեն մի ուրիշ ազգային խնդիր, կայանում է երկու թէ տնտեսական զարգացումով ու քաղաքակրթութեամբ եւ թէ հոգու ամբողջ կազմով տարբեր տարրերի համախառն կենսակցութեան անկարելիութեան մէջ նոյն պետական—վարչական պայմաններում: Եւ լսկապէս մի՞թէ կարելի է երկու աւելի տարբեր տարրեր երեւակայել, քան հայերն ու տաճիկներն են: Մէկը սթափ եւ աշխոյժ, միւսը երազուն եւ դանդաղ կոտ. մէկը ծայրահեղ անհատական, միւսը ստրուկ երամական հակումներին. դարեւոր քուլտուրական կեանքի եւ կուր մէջ հայը սրել է իր մտածողութիւնը, ամբարել է եռանդի անհատում պայտիւր եւ օծուած է ապրելու բուռն աննշով եւ կարողութեամբ, թիւրքը զուրկ յարատեւ ոյժը մարդ հրդեհի նման վերջին անգամ փորձ է փորձում նոր աւերումներ անելու, որ ինպատ հանգչիլու:

Իսլամական քարացած հիմնարկութիւնները, որոնք կարծես միայն անոր համար գոյութիւն ունին, որ



Այդ խնդրը «Իրաւունք»-ի 27 թւի մէջ դերասանական ոճով յայտարարում է որ ինքը արհամարհել է իմ քննադատութիւնները և ինձ :

Կրկնում եմ որ այդ ոգորմնու երկու պատգամագաւորները, գիշեր ժամանակ, բարեկամիս անունով, կառք ուղարկեցին և ինձ տարան այդ բարեկամիս տունը, ու այնպէս «ի սէր մարդասիրութեան» կրօնի անունով խնդրեցին Օղէսայից եկած նամակը չը հրատարակել, ինչպիսի «հանգաձակող տիկնոջը» :

Այդ խնդրանքի մերժումը ստանալուց յետոյ՝ կրօն Միքայէլեանը, մի քանի օր անընդմեջ վերջը, ապրիլի 6ին, իր «սեփական» ձեռքով գրված նամակով դիմեց ինձ, «եթէ բարեհաճիմ» Օղէսայի նամակի բնագիրը ցոյց տամ իր նշանակելիք մարդկանց, որի համար, եթէ բարեհաճէի, մեզ իր «վեհափառական» շնորհակալութիւնն էր խոստանում . . .

Արհամարած մարդուն խնդրելու համար պատգամաւորներ կը զրկե՞ն և այդ ձեւով նամակ կը գրե՞ն :

Ի հարկէ, իր նամակին պատասխան չընդունեց Կրօնիկ էֆէնտին . . .

Մարդիկ այսպէս են արհամարում :

Անպատասխան մնալու հարածը աւելի ծանր էր կրօն Միքայէլեանի համար . . . հանգանակութեան խնդրի պէս չէր «գրամական շահ չը կար որ դիմանար և լռէր» ու հիմա դուրս է եկել իր արհամարանքը մեզ յայտնելու : sic !

Բայց կրկին փաստը փաստ է մնում . . . Կրօն Միքայէլեանի տիկինը Օղէսայի մէջ հանգանակութիւն է կատարել Հայկական կրթարանի օգտին, ուր կարողութիւն ունեցող մարդկանց զաւակներին հետ մի երկու ձրիափարձ աշակերտներ կան : կրօն Միքայէլեանը իրաւունք չունի գաղթական և որք մանուկների անունը շահագործել . . .

Ի զուր տեղը այդ պարոնը «օյնիւրազութիւններ» է անում : Ինձ կարող են հարիւրաւոր խընդիրներ առաջարկել, և ես իրաւացի կամ անիրաւացի կերպով ոչ մէկին կարեւորութիւն տամ, բայց այդ չի կարող օգնել Կրօնին : Կրօն Միքայէլեանը պարտաւոր է լիովին այդ հանելուկը պարզել : նա մինչեւ օրս չէ ուրացել իրողութիւնը ոչ իր պատգամաւորների բերանով և ոչ էլ իր մասնաւոր նամակի մէջ : Արդէն «իրաւունք»-ի մէջ տպված նամակում էլ խնդր Կրօնիկը չէ ուրանում հանգանակութիւնը և . . .

ուզում է փաստը լեզուախնդր անել :

Չէ, «վեհափառ» կրօն, «օյնիւրազութիւններ» ժամանակ չէ բացատրութիւն, և բացատրութիւն պէտք է, այն էլ հրապարակաւ . . .

ՎԱՐԴՕ ԱՐՎԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ֆիլիպէի մէջ Դաշնակցութեան տասնամեակի առթիւ բաւական շքեղ հանգէս մը տեղի ունեցեր է, խուռն հայ բազմութեան ներկայութեամբ : հրատարակելու և մակերեսները : Հանգէսի առթիւ ընդարձակ թղթակցութիւն մը ունինք, որը յետագայ համարի մէջ պիտի հրատարակենք :

— Այս տարի երուսազէմի ուխտաւորներու թիւը հազարը անցեր է :

— Պոլսոյ պատրիարքարանը կաշխատի իրաւաստութեամբ կարգադրել իր և անյիշատակելի յղբանի ժառանգորդներուն միջև եղած 250 ոսկիի պահանջի խնդիրը :

— Վառնայի Մակեդոնական կօմիթէի Պաշտօնական գրութիւնը և արտայայտած կարծիքները Դաշնակցութիւն և գաշնակցականներու մասին «Իրաւունք»-ը չի տեսնար և ելեր է զառանցանքներ կընէ ու ըսի ըսաւներով կը խօսի : Փոխանակ ըսի ըսաւներով հասարակութիւնը խաբելու, թող այդ կարեւոր անդամներու ստորագրութեամբ նոյն խօսքերը տպագրէ : Բայց ուրկէ ուր . . .

ԱՐՅԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսէն Ապրիլ 8 թուականով կը հեռագրեն : Երէկ Սկիւպի դատարանին առաջ ներկայացան այն 21 պուլկարները որոնք յունվարին Իշթիպի մէջ խուզուութիւններու պատճառ եղած էին : ամբաստանաւնեւորուն մէջ կին մըն ալ կը գտնուի :

— Մանաթըրէն օտար հիւպատոսները կը հեռագրեն թէ Պարթէնիուս անուն պուլկար քահանանապրիլ 2ին սպաննուած է Մակեդոնական կօմիթէի մարդոց կողմանէ որոնք կասկածած էին թէ թուրքիոյ հաշտոյն կը գործէր : Գաղաքին շրջանակները պուլկար ապստամբներու խումբեր կը գտնուին զորս կը կը հալածէ տեղական իշխանութիւնը :

— Սօֆիայի Ռուսական գործակատարն Պ. Պահմէթիէֆ ապրիլ 7ին Սուլթանին ներկայացած է Պոլսոյ Ռուսիոյ դեսպանին միջոցաւ : Սուլթանը իր գոհունակութիւնը յայտնելու է Պահմէթիէֆի որ պէտք եղած խորհուրդները տուած է պուլկար

գահիծին որպէս զի Մակեդոնական կօմիթէն զսպուի : Պահմէթիէֆ պատասխանած է թէ Պ. Բարապէթիէֆ նախարարութիւնը ցանկացող է որ երկրին մէջ բարեկարգութիւն միշտ պահպանուի :

— Պոլսոյ Ռուսական դեսպանը պահանջած է Բ. Դունէն որ պատերազմի տուգանքէն վճարելիք յետնեալ դրամը և ուսուցչատակներու կրած ֆրասուց փոխարէնը անյապազ վճարուի : Այս գումարը կը հասնի 2,325,000 ֆրանքի : Դեսպանը բողոքած է նաեւ որ էրզրումի զինուորական ատենը թոյլ կը վարուի ուսներու վրայ յարձակում գործող քիւրտերու դասին մէջ :

— Կըսուի թէ ձերբակալելու հրաման ելած է Վաշինկթոնի օմմ. դեսպանատան Ա. քարտուզար Բիւսթէմ պէյի մասին որ Լոնտոնի լրագրի թղթակցին հետ տեսակցութիւն ունեցած և հակաթրքական գաղափարներ և աննպատակ եղելութիւններ ուրուած է :

— Գերմանական Գրուփ գործարանը ուր որ անկ է բողոքած է թուրք կառավարութեան դէմ շինած զրահաւորներու գրամները չը վճարելուն համար :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ նախարարութիւնը հեռագրով իշխան Կէրտինանտը խնդրած է վերագործը շտապեցնել :

— Պուլկարիոյ կառավարութեան պաշտօնական թերթը կը հաղորդէ հետեւեալը .

Նորին արքայական բարձրութիւնը, որ հիմա Թրանսայի Մէնթօն քաղաքը կը գտնուի, շաբաթէ մը ի վեր հիւանդ է և անկողնոյ կը ծառայէ : Զերմութիւնը ամէն օր 38 աստիճանի կը հասնի :

— Պուլկար թերթերը կը հաղորդեն որ Մակեդոնական ներկայ գօմիթէն ժամանակաւոր է, յուլիսին օրինական համադրմաբը տեղի պիտի ունենայ և նորէն գօմիթէի ընտրութիւն պիտի կատարուի :

Ներկայ արտակարգ համագումարը որոշեր է նախկին նախագահ, Պօրիս Սարաֆօվին իր գործունէութեանը համար շնորհակալութեան ուղերձ մը մատուցանել և պատգամաւորութիւն մը զրկել :

Նոր Բարձր. գօմիթէի նախագահ ընտրուել է բանաստեղծ Միխայէլովսքի, իսկ փոխնախագահ Վառնայի փաստաբան Վլաատիմիր Տիմիթիէֆ :

Ս Պ Ա Ն Ի Ա

Մատրիտէն կը հաղորդեն որ Պրմէն գացող գերմ. Հալլ նաւը

Վիկո հասեր է . ճամբորդներուն մէջ կը գտնուի եղեր անիշխանական մը որ մասնակից է եղեր կայսերներու դէմ սարքուած դաւադրութեանը, Բողարնօ-Կաթըրսընի մէջ : Անիշխանականը հրատարեր է ցամաք իջնալէ . գերմանական ոստիկանութիւնը կը սպասէ որ ան Պրէմէն հասնի և հոն ձերբակալէ :

— Ապրիլ 8ին Մատրիտի մէջ հակակղերական միթիւնի մը տեղի ունեցեր է : Ճառ ըսողները պահանջեր են եկեղեցիին պետութեան անջատումը և կրօնական ընկերակցութիւններու կազմալուծումը : Միթիւնիէն վերջը ուղեր են ցոյց ընել, բայց տեղացող անձրեւը արգելք եղեր է :

Յ Ր Ա Ն Ս Ա

Թրանսայի արտաքին գործոց նախարարը Բեթերսպուրկ գացեր է . կըսուի թէ ձարը կողմէ Տէլկասէի հետ խորհրդակցելի Պալքանեան թերակազմին և Զինաստանի վերաբերեալ խնդիրներու մասին :

Չ Ի Ն Ս Ա Տ Ա Ն

Ապրիլ 8ին Բէքինի մէջ կատարուել է հրգեհին զոհ գացած զօրաւոր Շվարցօֆի յուղարկաւորութեան հանդէսը :

— Անգլիական զօրախումբ մը որ Շան-Հայ-Քուանէ գրկուած էր շրջակաները գտնուող պօքսէրները հալածելու համար, ստիպուած է եղեր նահանջել, որովհետեւ պօքսէրները զինուած են եղեր նոր հրացաններով :

Անգլիացի հրամանատար մը սպաննուել է և շատ մը զինուորներ ալ վիրաւորուել են :

— Կըսուի թէ Մանչեսթրիոյ երկաթուղին նորէն յարձակումի ենթարկուել է շինացիներու կողմէն : 150 մղոնի շափ խորտակուած է և ուղիին վերաբերեալ շատ իրեղէններ ոչնչացուել են : այդ տարածութեան վրայ գըտնուած երկաթուղային պահապանները գրեթէ ամէնքն ալ սպաննուած են :

Այդ տեղերը զօրքեր զրկուած են :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

«Թայմը կը հաղորդէ որ մէնէրալ Պրէնչ քէշ մը տկար է և կիմացնէ թէ չի պիտի զարմացուի եթէ Պօթա հաշտութեան մասին բանակցիլ սկսի :

— Հոլանտայի արտաքին գործոց նախարարին Թրանսվալէն արտաքուած է 1100 հոլանտացիներ դիմել են և իրենց կրած ֆրասներու փոխարէնը կը պահանջեն :

Отговорникъ:  
Д-ръ М.Ж.ЖРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.